ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՏԱՐԲԵՐԱԿ

Կ-481-27.12.2022-ՏՏԳՇ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ԲՈՒՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Բուսական աշխարհի մասին» 1999 թվականի նոյեմբերի 23-ի ՀՕ-22 օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ «զ1» կետով .

«զ1) բուսական աշխարհի պետական կադաստրի տվյալների տրամադրման կարգի սահմանում.»:

Հոդված 2.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո Կառավարությունն ընդունում է բուսական աշխարհի պետական կադաստրի տվյալների տրամադրման կարգը՝ վեց ամսվա ընթացքում:

Երկրորդ ընթերցում

Կ-**481**-27.12.2022-ՏՏԳՇ-011/0

ՏԵՂԵԿԱՆՔ

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԲՈՒՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ~~Ը~~ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Բուսական աշխարհի մասին» 1999 թվականի նոյեմբերի 23-ի ՀՕ-22 օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ «զ1» կետով .

«զ1) բուսական աշխարհի պետական կադաստրի տվյալների տրամադրման կարգի սահմանում.»:

Հոդված 2. ~~**Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ.**~~

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո Կառավարությունն ընդունում է բուսական աշխարհի պետական կադաստրի տվյալների տրամադրման կարգը՝ վեց ամսվա ընթացքում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ ««ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԲՈՒՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-**481**-27.12.2022-ՏՏԳՇ-011/0, Կ-**481**[1]-27.12.2022-ՏՏԳՇ-011/0, Կ-**481**[2]-27.12.2022-ՏՏԳՇ-011/0)» ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	**Կառավարություն**	**«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 1-ին հոդված**	Նախագծի 1-ին հոդվածում «ՀՕ-221» ձևակերպումը փոխարինել «ՀՕ-221-Ն» ձևակերպմամբ:	Ընդունվել է	Ընդունվել է

		Նախագծի 1-ին հոդված	նախագծի 1-ին հոդվածում «(այսուհետ՝ Օրենք)» ձևակերպումն հանել:	Ընդունվել է	Ընդունվել է
		Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածը լրացնել *հետևյալ բովանդակությամբ նոր՝ 2-րդ կետով.* «2) 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ «ե1» *կետով*. «ե1) բնության հատուկ պահպանվող տարածքներում հանրային լողափերի ստեղծում»:	Ընդունվել է	Ընդունվել է
		Նախագծի 2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածի վերնագիրը, այն է՝ «Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ.» հանել.	Ընդունվել է	Ընդունվել է

2.		**«Բուսական աշխարհի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդված**	Նախագծի 2-րդ հոդվածի վերնագիրը, այն է՝ «Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ.» հանել.	Ընդունվել է	Ընդունվել է
3.		**«Կենդանական աշխարհի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդված**	Նախագծի 2-րդ հոդվածի վերնագիրը, այն է՝ «Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ.» հանել.	Ընդունվել է	Ընդունվել է